ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
«ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ» ԵՎ «ՎԱՐԴԵՆԻՍԻ ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋԻ» ՄԻՋԵՎ

ք.Երևան **«17» 03 2024թ.**

«Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջ» ՍՊԸ-ն (հետագայում՝ Քոլեջ)՝ ի դեմս տնօրեն Նիկողոս Գասպարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից և պետական հավատարմագրված Եվրասիա միջազգային համալսարանը (հետագայում՝ Համալսարան) ի դեմս ռեկտոր Սուրեն Օհանյանի, որը գործում է կանոնադրության և պետական լիցենզիաների հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Սույն պայմանագրով կողմերը պարտավորվում են հանրակրթության նախնական, միջին և բարձրագույն մասնագիտական կրթության արդյունավետության բարձրացման նպատակով իրականացնել բազմակողմանի համագործակցություն՝ ուսումնամեթոդական աշխատանքների կատարման, մասնագետների վերապատրաստման, սովորողների մասնագիտական կողմնորոշման, առաջավոր փորձի փոխանակման, միջազգային նորարար ծրագրերի ներդրման, գիտական համաժողովների, թեմատիկ մշակութային միջոցառումների, սեմինարների անցկացման և այլ համատեղ ծրագրերի իրականացման ուղղություններով:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրվելու պահից և գործում է անժամկետ:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 **«Քոլեջ» -ն իրավունք ունի.**

3.1.1 Համագործակցության պայմանագրով նախատեսված միջոցառումներին համապատասխան այցելել և տեղեկանալ **«Համալսարան»-ի** պայմանագրով նախատեսված գործառույթների կատարման մասին:

3.2. **«Քոլեջ»-ը պարտավոր է.**

3.2.1 Սովորողներին (պոտենցիալ դիմորդներին) ներկայացնել ԵՄՀ-ի կրթական առանձնահատկությունները և առավելությունները, նորարարական կրթական ծրագրերը, մասնագիտությունները և մասնագիտացումները:

3.2.2 Աջակցել համատեղ միջոցառումների, թեմատիկ սեմինարների, մանկավարժական պրոբլեմային քննարկումների, վարպետության դասերի, թեմատիկ բանավեճերի անցկացմանը:

3.2.3 Ապահովել սույն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ բոլոր պայմանները:

3.3. **«Համալսարան»-ն** իրավունք ունի.

3.3.1 Համագործակցության միջոցառումներին համապատասխան այցելել և տեղեկանալ պայմանագրով նախատեսված Քոլեջի կողմից պարտավորությունների կատարման արդյունավետության մասին:

3.4 **«Համալսարան»**-ը պարտավոր է.

3.4.1 Կազմակերպել մշակութային միջոցառումներ, ուսումնամեթոդական քննարկումներ, մասնագիտական վերապատրաստման դասընթացներ, իրականացնել լրացուցիչ կրթական ծրագրեր, անցկացնել վարպետության դասեր, համատեղ հետազոտություններ:

3.4.2 Ուսումը ԵՄՀ-ում շարունակող յուրաքանչյուր սովորողի համար կիրառել ուսման վարձի զեղչ 20%-ի չափով:

3.4.3 Ապահովել սույն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ բոլոր պայմանները:

4. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1. Սույն պայմանագրի ընթացքում կողմերի միջև ծագած բոլոր վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով փոխհամաձայնությամբ, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.2. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

4.3. Սույն պայմանագիրը կազմված է հայերենով, երկու հավասարազոր օրինակներից, որոնցից մեկը մնում է «Համալսարան» -ի մոտ, իսկ մյուսը՝ «Քոլեջ»-ի:

4.4. Սույն պայմանագրի կապակցությամբ կողմերը հայտարարություններ ու դիտողություններ չեն ներկայացրել, գրված է ճիշտ, որի համար ստորագրում են:

5. ԿՈՂՄԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջ» ՍՊԸ
Հայաստան, ք. Վարդենիս
Վ.Համբարձումյան 19
Հեռ.՝ +374 77 26 12 01
Հեռ.՝ +374 98 70 70 08
Էլ. հասցե՝ vardenisi-bhq@rambler.ru
Էլ. հասցե՝ medhumcollege@gmail.com
Կայք՝ www.mhcv.am

Տնօրեն __________ Ն. Գասպարյան

Եվրասիա միջազգային համալսարան
ք. Երևան, Ազատության 24, թիվ 2
Հեռ.՝+37410249438
Էլ. հասցե՝ info@eiu.am

Ռեկտոր՝ __________ Ս. Օհանյան